

Շուշանիկ Գ. Չոհրաբյան (Փարիզ)

Արվեստագիտության թեկնածու

ԱՐԱ ՂԱԶԱՐՅԱՆԻ «ՏԱՃԱՐ»

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Նվիրված Լեոնարդո դա Վինչիի հիշատակին*

Բանալի բառեր - Արա Ղազարյան, տաճար, դեկորատիվ-կիրառական արվեստ, ոսկերչական արվեստ, շախմատ, Գինեսի գիրք, Լեոնարդո դա Վինչի, Ֆլորենցիայի բիենալե:

Հայ դեկորատիվ-կիրառական արվեստում իրենց ուրույն տեղն ունեն ոսկերչությունն ու արծաթագործությունը, որոնց արմատները հասնում են մինչև խոր հնադար: Այդ մասին են հավաստում ազգագրական նյութերը, գրական աղբյուրները, հնագիտական պեղումների ժամանակ գտնված ոսկյա և արծաթյա իրերը:

Մեզանում բոլոր արհեստ-արվեստներից այսօր թերևս միայն հայկական ոսկերչությունն է, որ, զարդարվեստի ավանդական նախազարդերն ու մատուցման հնարքները պահպանելով հանդերձ, ստեղծագործական նորարարությամբ ու փնտրտուքներով, ավանդականը նորի հետ զուգակցելով, զարգանում ու համաշխարհային ճանաչում է վայելում: Պատճառը մի կողմից ազգային անխախտ հատկանիշների պահպանումն ու կիրառումն է, մյուս կողմից՝ նորագույն գաղափարների, դասական գեղարվեստական մտածողության վերակերպավորումը: Նման իրողությունները և արվեստում սեփական ուղիների որոնումները բավականին հստակ արտացոլված են ոսկերիչ-դրվագող Արա Ղազարյանի աշխատանքներում:

Արա Ղազարյանը ծնվել է 1974 թ. հոկտեմբերի 8-ին Գյումրիում: Ոսկերչական արվեստում իր առաջին քայլերն արել է հայրենի քաղաքում, երբ դեռ տասնչորս տարեկան էր: Այնուհետև իր գիտելիքները խորացրել և զարգացրել է Գյումրիի գեղարվեստի ուսումնարանի մետաղամշակման և դիզայնի բաժնում, որտեղ էլ ձևավորվել են նրա գեղագիտական պատկերացումներն ու կատարողական հմտությունները, ընդ-


* Հղվածն ընդունվել է տպագրության 20.01.2020:

ՎԷՄ համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) 4րորի, թիվ 1 (69), հունվար-մարտ, 2020

լայնվել է աշխարհընկալումը՝ հուշելով հետագա աշխատանքների նոր թեմաներ: Շնորհիվ իր ինքնատիպ ստեղծագործությունների, նուրբ ճաշակի, ազգային արվեստի նորոլի մեկնաբանման՝ Արա Ղազարյանը քսան տարեկանում արդեն բավական ճանաչված էր Գյումրիում՝ միաժամանակ պատվերներ ստանալով ողջ Եվրոպայից: Սակայն 1988 թ. երկրաշարժի հետևանքով 2001 թ. նա տեղափոխվում է ԱՄՆ և կարճ ժամանակ անց բացում իր սեփական դիզայներական ստուդիան՝ «Արա Դավիթի» անվանումով:

Արա Ղազարյանի թեմաները բազմազան են. յուրաքանչյուրը՝ բացահայտված հեղինակային ուրույն դիտակետից: Հենվելով դիտարկված, իմաստավորված և ներգագսած մի շարք մոտիվների վրա՝ նա գտնում է այնպիսի լուծումներ և արտահայտչականության ինքնատիպ չափանիշներ, որոնք համապատասխանում են իր դեկորատիվ տեսունակությանը: Արա Ղազարյան ոսկերիչը և՛ ճարտարապետ է, և՛ քանդակագործ, և՛ նկարիչ, և՛ ինժեներ: Նա իր աշխատանքները կերտում է իր իսկ ստեղծած գործիքներով, որոնք աշխարհի որևէ վայրում չեն վաճառվում: Նոր աշխատանք սկսելիս նա մանրամասն մշակում է **Էսքիզը**, գտնում անհրաժեշտ սիլուետն ու նախշը՝ հասնելով ձևի և բովանդակության կարելվույն չափ լիակատար ձուլման: Եվ «կառուցելով» ոսկերչական իրը՝ յուրաքանչյուրի համար գտնում է կոմպոզիցիայի ամենաարտահայտիչ ու բնորոշ ձևը:

Իր գեղարվեստական հատկանիշներով և տեխնիկական առանձնահատկություններով առանձնանում է Արա Ղազարյանի «Տաճար» ստեղծագործությունը (2019 թ.)², որի հորինվածքի մատուցման ինքնատիպ ձևը բխում է ներքին բովանդակությունից: Այն մասի ու ամբողջի, ձևի ու նպատակամիտումի միակուռ ձուլվածք է, արվեստագետի գեղարվեստական սկզբունքայ-



Արա Ղազարյան (Արա Դավիթի), Խառատային հաստոցի գծագիր (90'), 2008 թ.

² 2019 թ. հոկտեմբերի 18-27-ը կայացած Ֆլորենցիայի ժամանակակից արվեստի միջազգային XII բիենալեում Արա Ղազարյանն իր «Տաճար» ստեղծագործությամբ արժանացել է «Լորենցո Մեդիչի» հատուկ մրցանակին և պարգևատրվել ոսկե մեծ շքադրամով:

նության և հետևողականության արդյունք:

Ղազարյանի համար կերպավորման ձևերը, մակերեսները մշակելու միջոց լինելուց զատ, պայմանավորում են առարկայի ամբողջական բնույթը: Հիշյալ աշխատանքի տարրեր հատվածների մակերեսները նա մշակել է ֆակտուրային տարրեր հնարքներով և հաշվարկված միջոցներով հասել առավելագույն արտահայտչականության:



Արա Ղազարյան, «Տաճար», 2019 թ.



Արա Ղազարյան, «Տաճար», 2019 թ.

«Տաճար» ստեղծագործությունը (բարձրությունը՝ 108 մմ, իսկ լայնությունը՝ 45 մմ) բաղկացած է 108 կտորից՝ պատրաստված 18 և 22 հարգի ոսկով, «Argentium» տեսակի արծաթով: Օգտագործվել է նաև Հայաստանի ծիրանի փայտ: Աշխատանքի գեղարվեստական երեսամշակումն արվեստագետն իրականացրել է արծնապատումով (կիրառված արծնի հիմքը 800°C հալման ջերմաստիճանում ապակե հալույթն է, որն օգտագործվել է հնում)³ կիրառելով միջպատային³, ռելիեֆային և նախազարդային եղանակները: Իսկ ոսկին՝ որպես հիմք, արծնին առանձնակի պայծառություն է հաղորդել:

3 Միջպատային էմալի տեխնիկան հայ ոսկերիչների կողմից ամբողջությամբ յուրացվել է հելլենիստական շրջանում (տես Հին Հայաստանի ոսկին (մ. թ. ա. III հազարամյակ – մ. թ. XIV դար), Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, էջ 218):

Տեխնիկական հնարքներից⁴ հիշատակենք նաև ձուլումը, փորագրությունը (ուռուցիկ-գոգավոր, խորացված), ցանցկենը, հատիկապատումը, ընդելուզումը, ցանցագարդը (Ֆիլիգրանը) և այլն, որոնք ոչ միայն կիրառություն են գտել նրա աշխատանքներում, այլև ստացել են նոր որակ:

Արա Ղազարյանն առավելագույնս օգտագործել է գույնի արտահայտչական հնարավորությունները: Տաճարի գունային զամման հյուսված է կարմիրի, կապույտի, կանաչի և ոսկեգույնի երանգների հարաբերությամբ: Նա հետևել է գույնը գույնի, գիծը գծի հետ երևակայորեն գուզորդելու և գեղեցիկ ռիթմային հորինվածք ստեղծելու թելադրանքին:

Դեկորի օգտագործման մեջ արվեստագետը զուսպ է: Ձևավորման տարրերի խստիվ տրամաբանված փոխկապակցմամբ Արան ստեղծել է պլաստիկական ամբողջության մեջ ներդաշնակված զարդանոտիվներ, որոնք գուզակցվում են տաճարի ձևերի շեշտադրմանն ու ընդհանուր հորինվածքային մտահղացմանը: Նա դարերի խորքից եկած ու բյուրեղացած պարզ և հմայիչ ձևերին նոր արտահայտչականություն է հաղորդել, որոնք ասես ցուցադրում են իբրև հուշ մնացած իրենց գաղափարական էությունը: Գաղափարական այս բովանդակությունը և՛ արվեստագետի մտածողության արգասիքն է, և՛ ասես հնագույն ժամանակներից եկող վերհուշ, որը փոքրանալով ու որոշակիանալով սեղմվել և դարձել է շոշափելի ու ընկալելի խորհրդանիշ: Այստեղ արևելյան զարդանախշային մոտիվն ու ճոխագարդման յուրատիպ մտածողությունը Ղազարյանը դիտել-օգտագործել է հայ արվեստի խստապարզ գեղագիտական մտածողության տեսանկյունից:

Գմբեթի չորս կողմերն ու զազաթը պսակված են կարմիր սուտակներով⁵ և երեք շարք (յուրաքանչյուրում՝ 18-ական⁶) ընդելուզված աղամանդե քարերով՝ ներկայացված արվեստագետի նախընտրելի ձևերի՝ ութանկյան⁷ և շրջա-

4 Նշենք, որ Հայաստանում դեռևս հելլենիստական դարաշրջանում ոսկերիչներն ընդհանուր առմամբ կիրառել են ոսկերչական տեխնիկայի բոլոր ձևերն ու հնարքները՝ կռելու, ծուլելու, դրվագելու, դրոշմելու, փորագրման, ընդելուզման, հատիկի և թելի հյուսվածքի (ֆիլիգրան), ոսկեզօծման, տարբեր հաստության լարեր ձգելու և նուրբ թելեր պատրաստելու, գլանման և այլն: Հայաստանի ոսկերիչները հաճախ հաջողությամբ համատեղել են տեխնիկական տարբեր եղանակներ, այսինքն՝ ծուլված, դրվագված կամ դրոշմված քանդակները փորագրվել, ոսկեզօծվել են և այլն (տես Հին Հայաստանի ոսկին (մ. թ. ա. III հազարամյակ – մ. թ. XIV դար), էջ 216-217):

5 Սուտակն արքայական արծաթիքի, կենսական ուժի, Քրիստոսի չարչարանքների խորհրդանշան է (տես «Խորհրդանշանների հանրագիտարան», Եր., «Նշանակ» հրատ., 2007, էջ 312-313):

6 Միջնադարյան քրիստոնեական մեկնողական գրականության մեջ 18 թիվը բացատրվում էր 10-ի և 8-ի գումարով, ինչը նշանակում էր Օրենքի կատարում Ընորի միջոցով (տես «Энциклопедия символов, знаков, эмблем», сост. В. Андреева и др., М., Изд. «Локид», «Миф», 2000, էջ 107): Այդ թիվը հանդիպում է նաև Ավետարանում (Ղուկաս 13. 11), որտեղ ասվում է, որ Հիսուսը բժշկեց մի կնոջ, որը հիվանդ էր 18 տարի:

7 Ինչպես գիտենք, ութանկյունը կամ 8 թվի երկրաչափական արտահայտությունը միջանկյա ֆիգուր է քառակուսու (երկրային գոյության) և շրջանի (երկնքի, հավերժության) միջև՝ իր մեջ միավորելով առաջինի կայունությունը և երկրորդի ամբողջականությունը, իսկ ութանկյան կամ երկու քառակուսիների համակցումը՝ տիեզերքի, երկնքի ու երկրի խորհրդանիշը: (տես «Խորհրդանշանների հանրագիտարան», էջ 13): **8 թիվը նաև աշխարհի չորս կողմերի մաթեմատիկական խորհրդանիշն է, ներառյալ միջանկյա ուղղությունները՝ հարավ-արևելք, հարավ-արևմուտք, հյուսիս-արևելք, հյուսիս-արևմուտք:** Պետք է նշել նաև, որ Բեթլեհեմի աստղը տվորաբար պատկերվում է 8 ճառագայթներով:

Որպես հավիտենական կյանքի, վերածնության, հարության խորհրդանիշ՝ «ութ թիվը նույնքան հին է, որքան քրիստոնեական եկեղեցին» (տես՝ **Ամիրխանյան Ռ. Ֆ.**, Տեմպիտոտո Հարության տաճար և Խաչելության Գողգոթա, «Լրաբեր հաս. գիտ.», Եր., 2004, N 2, էջ 16): Պրանում է ամփոփված վերածնման, հավերժական երանության, տիեզերքի վերակառուցման գաղափարը, որը, ելնելով սուրբ շաբաթվա թվային մեկնաբանությունից, հաջորդում է յոթերորդ օրվան

նի մեջ: 18 է նաև գմբեթի պատուհանների թիվը: Խորհրդանշանի ձևաբանական կառուցվածքը գուգակցված է ներքին իմաստաբանությանը: Այստեղ ձևը և բովանդակությունը ոչ միայն լրացնում, այլև շարունակում են միմյանց:

Արա Ղազարյանի ստեղծագործական նկարագրի յուրահատկություններից է սեփական կերպարային լուծումների անդադրում որոնումը, որով կարելի է բացատրել գեղարվեստական ժառանգության՝ նրա գեղագիտական յուրատեսակի մաստավորումը: Ղազարյանի ստեղծած զարդում նշմարվում է Արևելքի ու Եվրոպայի դարաշրջանների գեղարվեստական որոշ ավանդների հեռավոր արձագանքը: Արվեստագետի պայծառ երևակայությունն ու ժողովրդական ազգային արվեստին քաջահմուտ լինելը դիտողին մտովի տեղափոխում են հայկական մանրանկարչության հարուստ աշխարհը:



Էջմիածնի Ավետարան, 989 թ.,
Տանարիկ (Tempietto),
Մատենադարան, Ձ. 2374, թ. 5բ



Ավետարան, X դար, Տանարիկ
(Tempietto),
Մատենադարան, Ձ. 9430, թ. 1 ա

Այս առնչությամբ մասնավորապես կարելի է հիշատակել Մատենադարանի՝ 989 թ. Էջմիածնի Ավետարանում կամ X դարի № 9430 ձեռագրում հանդիպող՝ սյուների վրա հանգչող ու տաղավարաձև ծածկ ունեցող շինությունը՝ Տանարիկը (Տենպիետտո)⁸: Կառուցվածքային ամբողջության ու բաղկացուցիչ մասերի կապի առումով «Տանար» ստեղծագործությունն աղերսվում է նաև իտալական ճարտարապետության Վերածննդի շրջանի՝ Տենպիետտո հիշեցնող ոռ-

միաժամանակ վկայակոչելով արարչագործության առաջին շաբաթվա նորոգումը (Արարչ. Բ) (տե՛ս Underwood P., The Fountain of Life in Manuscripts of the Gospels, DOP, t. 5, Harvard University, 1950, էջ 81):
Ի դեպ, ութանկյան և շրջանի մեկը մյուսին հաջորդող զարդանուփվների ենք հանդիպում էջմիածնի տաճարի զանգակատան արտաքին հարդարման զարդանախշերում, իսկ ութանկյան Մակարավանքում գտնվող Ջաքարյանների տոհմական գինանշանում և այլուր:
8 Հայկական պատկերագրության մեջ Տենպիետտոյի կարևոր հատկանիշներից է 8 սյուների առկայությունը, որոնց վրա է խարսխված ողջ ճարտարապետական կերպարը (Նկատի ունենալով, որ 4 երևացող սյուները կրկնապատկվում են բոլորաձև տաճարի դեպքում. այս տրամաբանությունը հաճախ հաշվի է առնվում նկարչի կողմից) (տե՛ս Ամիրխանյան Ռ. Ֆ., նշվ. աշխ., էջ 16): Ճարտարապետ Ստ. Մնացականյանի կարծիքով՝ տաճարիկները լայն տարածում են ունեցել հատկապես Սյունյաց աշխարհում (տե՛ս Մնացականյան Ստ., Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Եր., 1960, էջ 202):

տոնդաձև տաճարներին՝ բոլորակ հատակագծով, գմբեթով պսակված կենտրոնակազմ կառույցներին, որոնց պարագծով տեղադրված են սյուներ:



Բրամանտե, Տենպիետոտո
1502-1510 թթ.



Փ. Բրունելեսկի, Սանտա Մարիա դել Ֆիորեի
գմբեթը, 1420-1436



Արա Ղազարյան, «Տաճար», 2019 թ.

Արա Ղազարյան, «Շախմատ», 2017 թ.

Մասնավորապես կարելի է հիշատակել Հռոմում Բրամանտեի տաճարը կամ Տենպիետոտոն և Վերածննդի առաջատար նարտարապետ Փ. Բրունելեսկու կողմից նախագծված ու Վաղ վերածննդի խորհրդանիշ դարձած Ֆլորենցիայի գլխավոր տաճարի՝ Սանտա Մարիա դել Ֆիորեի գմբեթը: Վերածննդի արվեստից վերցված մոտիվները Ղազարյանի ձեռքի տակ վերածվել են գեղազարդող տարրերի: Իրեն հատուկ հմտությամբ յուրացնելով դրանց որոշ կողմեր՝ իր սեփական ստեղծագործական նորամուծություններով և յուրահատուկ

հեղինակային ոճով Ղազարյանը սինթեզի մի նոր որակ է հաղորդել հիշյալ աշխատանքին, ներկայացրել հայկական և եվրոպական մտածելակերպերի՝ բնական ու անմիջական շփումով միահյուսման փայլուն օրինակ: Կատարման ինքնատիպության ու ծավալածների պլաստիկ մշակվածության շնորհիվ Տանարիկի (Տեմպլետտոյի) թեման արդիական հնչողություն ու նոր երանգավորում է ստացել: Արա Ղազարյանի ստեղծագործության գնահատման չափանիշը ոչ թե ավանդույթների կամ ազդեցությունների ամկայությունը կամ բացակայությունն է, այլ այն արդյունքը, որ ձեռք է բերել ստեղծագործման ընթացքում: Համահունչ լինելով իր դարաշրջանին՝ նա ընդունված ձևի մեջ ամբողջացրել է իր ժամանակաշրջանի մտայնությունները, զգացողությունները՝ որսալով անանցանելի, էականը, բովանդակայինը:



Հայ աստվածների հուշարձանախումբ

Արա Ղազարյանի աշխարհընկալումն իր արտացոլումն է գտել ոչ միայն գեղարվեստական արտահայտչաձևերի ու միջոցների, այլև դրանց կիրառման իմաստի և գործածության մեջ: Նա տանարը պատել է ապակեպատ տարածությամբ, իսկ գմբեթատակ հատվածում՝ տեղադրել մանրադիտակ, որի օգնությամբ կարելի է տեսնել Գինեսի գրքում ներառված իր հեղինակած աշխարհի ամենափոքր շախմատը (2017 թ., 6.5 գրամ, 15.3 x 15.3 մմ)՝ պատրաստված սպիտակ ու դեղին ոսկուց (18 հարգի) և բրազիլական բալենուց⁹: Շախմատային խաղաքարերից ամենից մեծերը թագավորն ու թագուհին են (յուրաքանչյուրը՝ 4.8 մմ, ադամանդե շարժական թագերով), իսկ ամենափոքրերը՝ զինվորները (2.3 մմ): Եվս չորս ադամանդե քարեր տեղադրված են շախմատե տախտակի հիմքում: Շախմատը ստեղծելիս Ղազարյանը, ինչպես ինքն է նշում, ներշնչվել է Արևելյան Տավ-

վել համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) տարի, թիվ 1 (69), հունվար-մարտ, 2020

9 Տե՛ս **Stephenson K.**, Check out the world’s smallest handmade chess set (<https://www.guinnessworldrecords.com/news/2017/8/check-out-the-world%E2%80%99s-smallest-handmade-chess-set-486537>) (Published 15 August 2017):

րոսի լեռնաշղթայում գտնվող Նեմրուժ լեռան հայ աստվածների հուշարձանախմբից, մասնավորապես՝ կոնաձև արհեստական դամբանաբլրի երկու կողմերում՝ արևելքում և արևմուտքում կառուցված նույնակերպ արձաններից, որոնք պատկերում են Արամազդին, Վահագնին, Միիր-Արեգին, Անտիոքոս Ա Երվանդունի թագավորին, Կոմմագենեի դիցուհուն¹⁰։

Արվեստագետն այստեղ համարձակ ու անկաշկանդ է եղել նոր ձևերի կիրառման և կոմպոզիցիայի յուժման մեջ, ինչը վկայում է իր նրբազգացության և արտահայտչամիջոցների ճիշտ ընտրության մասին։ Ուշագրավ է ստեղծագործության միասնական գեղարվեստական կերպարը։ Արա Ղազարյանը տաճարը տեղադրել է յուրօրինակ զարդանախշով և Արարատ լեռան գրաֆիկական նուրբ գծերով պատկերված ձեռքի մեջ՝ պատրաստված «Argentium» տեսակի արծաթից և տեղադրված լաջվարդե քարի վրա։ Վերջինս ասես յուրօրինակ պատվանդան է դարձել ստեղծագործության համար։ Ղազարյանի համար այն մարդկության պատմության սկզբից ի վեր հրաշքներ արարող ձեռքն է, որի պատկերումով նա նաև իր յուրօրինակ հարգանքի տուրքն է մատուցում **Լեռնարդո դա Վինչիին**՝ նկատի ունենալով վերջինիս ձեռագրերում առկա ձեռքերի բազմաթիվ գծագրերը։ Կոմպոզիցիայի բոլոր մասերը սերտորեն ներդաշնակված են, մանրամասները՝ մտածված։ Այս բոլորը միասին ստեղծում են գեղարվեստական կերպար, որն անսովոր հանդիսավորություն ունի։



Արա Ղազարյան, «Տաճար», 2019 թ.

Թեմատիկ-կոմպոզիցիոն աշխատանքներն արվեստագետի հստակ մտածողության, ոճի, գեղարվեստական լեզվի վառ արտահայտություններն են։ Նրա ստեղծած յուրաքանչյուր իր դառնում է ձեռակերտ հրաշք՝ ոչ միայն նյութ, այլև ոգի, որը զարմանալի զգայական ազդեցություն է ունենում դիտողի վրա։ Ապշեց-

10 Տե՛ս **Հայկազուն Ա.**, Խորհրդանշանային մտածողությունը հայ ճարտարապետությունում, Եր., «ԱԼԱՍ», 2005, էջ 105:
Այն դասական արևապաշտական մի հուշարձան է, որի արևելյան հարթակից ամեն առավել ողջունել են արեգակին, իսկ արևմտյան հարթակից՝ ամեն երեկո բարի մայրամուտ մաղթել։ Հուշարձանախմբի կենտրոնական հորինվածքը մարդակերպ արձաններն են նստած դիրքով։ Կենտրոնում Արամազդ-Օրոնազդես-Ջևան է, որը հայոց դիցարանում մեծարվել է որպես երկնքի ու երկրի արարիչ, աստվածների հայր, մարդկանց պրիոթյուն ու լիություն շնորհող և երկրին պարարտություն պարգևող։ Արամազդի աջ կողմում մայր դիցուհու արձանն է, որը վաղնջական ժամանակներից համարվել է ռազմի դիցուհի, երկրի ու մայրաքաղաքի պահապան, բարեշնորհի հովանավոր, երկրի փառքն ու սնուցողը և մեծարվել «Ոսկեմայր» տիտղոսով։ Արամազդի մյուս կողմում Միիր-Ապոլոն-Վեիոսի կենսատու լույսի, արևի ու արդարության աստծո արձանն է։ Կենտրոնական այս երեք արձանները ներկայացնում էին դիցարանը գլխավորող երեք գերագույն աստվածների (տե՛ս **Մովսիսյան Ա.**, Արևմտյան Հայաստանի 10 ուխտավայրեր, Եր., «Ջանգալ», 2011, էջ 98-99)։

նում են Ղազարյանի գործերի նրբությունը, վայելչագեղությունն ու կատարման հնարքները, որոնց միասնական համակարգում էլ ի հայտ է գալիս դրանց արտահայտչականությունը: Դրանք միաժամանակ նյութական միջավայր են ստեղծում ներառելով գեղագիտական և գաղափակերպարային սկիզբ:

Շուշանիկ Գ. Չոհրաբյան - գիտական հետաքրքրությունների բնագավառը՝ հայկական և արևմտաեվրոպական արվեստ: Ուսումնասիրում է հայ նորագույն և ժամանակակից շրջանի արվեստը՝ համաշխարհային արվեստի համատեքստում: Հեղինակ է 22 հոդվածների և մեկ մենագրության՝ նվիրված հայ անվանի արվեստագետ Վարդգես Սուրենյանցի գրքային նկարազարդումներին:

Summary

“THE TEMPLE” BY ARA GHAZARYAN

Dedicated to the Memory of Leonardo da Vinci

Shushanik G. Zohrabyan
Doctor of Philosophy (PhD) in Arts

Key words - Ara Ghazaryan, temple, decorative-applied art, jewellery art, chess, the Guinness Book of World Records, Leonardo da Vinci, Florence Biennale.

The theme of the composition, the search of his own ways in art are quite clearly expressed in the oeuvre of jeweller, engraver Ara Ghazaryan. Ara Ghazaryan’s art is in touch with the Armenian and fine arts in general. This is where the vivid imagination, simplicity and immediacy of his worldview originate. When starting a new artwork, he elaborates on the sketch, finding the appropriate silhouette and layout, achieving a complete acquisition of form and content.

Such is the composition entitled “Temple” (2019), which is distinguished by its artistic features and technical qualities, whose unique form of composition derives from its content. It consists of 108 pieces, made of 18 and 22-carrat gold and silver “Argentium”. Armenian apricot wood has also been used. The height of the “Temple” is 108 mm and the width is 45 mm. Ara Ghazaryan has performed the artistic processing of his artwork by enameling, using partitioning, relief and ornamental methods. The four sides and the top of the dome are crowned with red rubies and three rows with 18 encrusted diamonds in each row, represented in Ghazaryan’s favourite shapes, octagonal and round. The dome also has 18 windows. The harmonious choice of colors is made with the relations of red, blue, green, and gold.

Ara Ghazaryan's worldview is reflected not only in his creative expressions and means, but also in their significance and application. Ghazaryan has covered the temple with glass, and placed a microscope under the dome, which allows you to see the smallest chessboard in the world. His own creation, included in the Guinness Book of World Records (2017; 6.5 gram, 15.3x15.3 mm dimensions) made of 18K white and yellow gold and Brazilian cherry wood. The biggest of the chess pieces are the King and the Queen (each 4.8 mm, with diamond removable crowns), and the smallest are the soldiers (2.3 mm each). Four more diamonds lie at the base of the chess board.

Ara Ghazaryan has placed the "Temple" in a hand, drawn in the shape of a unique ornament and graphically delineated with fine lines of Mount Ararat (made of silver "Argentium" and placed on lapis lazuli stone), which has become a unique pedestal for the "Temple".

He made what is considered to be the most complex and technically very variable part of the human body. Ara Ghazaryan delivers a powerful message to the viewer. The hand is not here just as the main tool of creation, but also as an important focus of representation, which has an esthetic and symbolic contents. The power in the hand is the power to love, to hate, to create, to destroy. For Ara this is the Hand which creates miracles since the beginning of human history and gives it to civilizations. We can also say that with this Hand Ara Ghazaryan also pays tribute to Leonardo da Vinci.

The thematic-compositional artworks are the vivid expressions of the clear thinking, style, artistic language of Ara Ghazaryan. Each of his created item becomes a miracle of handmade work, not just an object, but also a spirit or character that has an amazing emotional impact on the viewer.

Резюме

ПРОИЗВЕДЕНИЕ АРА КАЗАРЯНА «ХРАМ»

Посвященное памяти Леонардо да Винчи

Шушаник Г. Зограбян (Париж)
Кандидат искусствоведения

Ключевые слова - Ара Казарян, храм, декоративно-прикладное искусство, ювелирное искусство, шахматы, книга рекордов Гиннеса, Леонардо да Винчи, Флорентийская биеннале.

Тематика произведения, поиск собственных путей в искусстве достаточно четко выражены в творчестве ювелира-дизайнера Ара Казаряна. Искусство

Ара Казаряна находится в контакте с армянским изобразительным искусством в целом. Именно оттуда берут начало его яркое воображение, простота и непосредственность мировоззрения. Начиная новую работу, он разрабатывает эскиз, находит правильный силуэт и рисунок, достигая полного усвоения формы и содержания.

Такое произведение - «Храм» (2019 г.), которое отличается своими художественными особенностями и техническими качествами: оригинальная форма композиции вытекает из ее внутреннего содержания. Произведение состоит из 108 элементов, изготовленных из 18- и 22-каратного золота и серебра «Аргентиум». Использовалась также армянская абрикосовая древесина. Высота «Храма» составляет 108 мм, а ширина - 45 мм. Художественную обработку своего произведения Ара Казарян выполнил методом эмалирования, используя разделительные, рельефные и орнаментальные методы. Четыре стороны и верхняя часть купола увенчаны красными рубинами и тремя рядами из 18 инкрустированных бриллиантов в каждом ряду, представленными в любимых формах Казаряна - восьмиугольной и круглой. Число купольных окон также 18. Гармоничный выбор цветов достигается за счет сочетания красного, синего, зеленого и золотистого.

Мировоззрение Ара Казаряна отражается не только в художественном выражении и его средствах, но и в их значении и использовании. Казарян покрыл храм стеклом и поместил под купол микроскоп, который позволяет увидеть самую маленькую шахматную доску в мире. Собственное творение, занесенное в Книгу рекордов Гиннеса (2017; 6,5 грамм, размеры: 15,3x15,3 мм), сделано из белого и желтого золота 18 каратов и бразильской вишни. Самые большие шахматные фигуры - король и королева (по 4,8 мм каждая, со съемными бриллиантовыми коронками), а самые маленькие - солдаты (2,3 мм каждая). Еще четыре бриллианта лежат у основания шахматной доски.

Ара Казарян поместил «Храм» в руку, нарисованную в виде уникального орнамента и очерченную тонкими линиями горы Арарат (изготовленной из серебра «Аргентиум» и помещенной на афганском лазурите), которая стала уникальным пьедесталом для «Храма».

Он изготовил то, что считается самой сложной и технически очень изменчивой частью человеческого тела. Ара Казарян передает зрителю мощное послание. Рука здесь выступает не только как основной инструмент творчества, но и как важный фокус репрезентации, который имеет эстетическое и символическое содержание. Для Ара это Рука, которая творит чудеса с самого начала человеческой истории и дарит их цивилизациям. Можно также сказать, что Ара Казарян этой Рукой также отдает дань уважения Леонардо да Винчи.

Тематически-композиционные работы являются ярким выражением ясного мышления, стиля, художественного языка Ара Казаряна. Каждое из его произведений становится чудом ручной работы, не только предметом, но и духом или характером, оказывающим удивительное эмоциональное воздействие на зрителя.

REFERENCES

1. «Enciklopedija simbolov, znakov, emblemı, sost. **V. Andrejeva** i dr., M., Izd. «Lokid», «Mif», 2000 (**In Russian**).
2. «Khorhrdanshanneri hanragitaranı, Yer., «Nshanak» hrat., 2007 (**In Armenian**).
3. **Amirkhanyan R. F.**, Tempietto` Harut`yan tachar yev Khach`elutyán Goghgot`a, Yer., «Lraber has. git. », 2004, N 2 (**In Armenian**).
4. **Haykazun A.**, Khorhrdanshanayin mtatsoghut`yuně hay chartarapetut`yunum, Yer., «ALAS», 2005 (**In Armenian**).
5. «Hin Hayastani voskinı (m. t`. a. III hazaramyak – m. t`. XIV dar), Yer., HH GAA «Gitut`yun» hrat., 2007 (**In Armenian**).
6. **Mnats`akanyan St.**, Haykakan chartarapetut`yan Syunik`i dprot`s`ě, Yer., 1960 (**In Armenian**).
7. **Movsisyan A.**, Arevmtyan Hayastani 10 ukhtavayrer, Yer., «Zangak», 2011 (**In Armenian**).